ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ **31.07. 2023թ. ժամը 14^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետ**
Հ. Գույլանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ**
Հ. Գևորգյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար**
Ա. Գրիգորյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական**
Մ. Դավթյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական**
Մ. Հովհաննիսյանը	**ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական**

Մարզի ուժային կառույցների ղեկավարներ

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ, տեղակալներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանի նախագահությամբ մեկնարկեց օրակարգային հարցերի քննարկումը:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ:
2. Մարզի համայնքներում ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ:
4. Բնակչության ազդարարումն ապահովելու նպատակով մարզում ազդարարման համակարգի ներդրման վերաբերյալ:
5. Մարզում 2024 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի հայտերի և տեխնիկական բնութագրերի ներկայացման կարգի մասին:
6. Ընդերքօգտագործման նպատակով տրամադրված հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման մասին:
7. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Լսեցին՝

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրումը 2023 թվականի առաջին կիսամյակի դրությամբ իրականացվել է 100 %-ով, որը կազմում է տարեկան պլանային ցուցանիշի մոտ 58%-ը: Բարձր ցուցանիշներ են ապահովել Աշտարակ /63,4%/, Շամիրամ /102,4%/, Ապարան /50,4%/, Ալագյազ /61,6%/, Ծաղկահովիտ /65,9 %/, Մեծաձոր /64,6%/ համայնքները: Որոշակի թերացումներ կան Արևուտ /48,2%/ և Թալին /45,3%/ համայնքներում:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանն առաջարկեց Թալին և Արևուտ համայնքների ղեկավարներին առաջիկա ամսվա ընթացքում բարելավել իրենց եկամուտների հավաքագրման գործընթացը, իսկ պատասխանատու ոլորտներին, համայնքների ղեկավարներին հետևողական լինել այդ աշխատանքները պատշաճ կազմակերպելու ուղղությամբ տարեվերջին անհրաժեշտ պլանավորած ցուցանիշը ապահովելու նպատակով:

2. Մարզի համայնքներում ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Հ. Ասատրյանը նշեց, որ ՏԿԵ նախարարի հանձնարարականի համաձայն 2023 թվականի փետրվար ամսից մեկնարկել է մարզի համայնքապետարանների աշխատակազմերի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների 2003-2022թթ. ժամանակահատվածում ամենամյա չօգտագործված արձակուրդների տրամադրման գործընթացը: 2023 թվականի փետրվարի 10-ի դրությամբ ամենամյա չօգտագործված արձակուրդների ընդհանուր գումարը մարզի համայնքներում կազմել է 18 մլն. 917 հազար ՀՀ դրամ: Համայնքապետարանների կողմից ձեռնարկված համապատասխան աշխատանքների արդյունքում 2023 թվականի հունիսի 1-ի դրությամբ մարվել է շուրջ 16 մլն. 400 հազար ՀՀ դրամ և մնացել է ընդամենը 2 մլն. 500 հազար ՀՀ դրամ: Ամենամյա չօգտագործված արձակուրդների տրամադրման աշխատանքները շարունակվում են:

Մարզպետի տեղակալ Հ. Գույյանի և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Հր. Գևորգյանի կողմից ներկայացվեց ՀՀ աշխատանքային օրենսգրքում տեղի ունեցած այն փոփոխությունները, որոնք վերաբերվում են արձակուրդի տրամադրման կարգին: Նշվեց, որ վերանայվել են արձակուրդի կարգավորումների այն կենտը, որ եթե աշխատողը երկուսուկես տարի անընդմեջ խուսափում կամ հրաժարվում է իրեն հասանելիք ամենամյա արձակուրդից, ապա գործատուն այն տրամադրում է առանց աշխատողի դիմումի: Նշվեց նաև, որ նախատեսվել է օրենսգրքով սահմանված ժամկետներում ամենամյա արձակուրդը աշխատողին չտրամադրելու դեպքում գործատուի կողմից աշխատողին տուգանք վճարելու կարգավորում:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին առաջնորդվել նոր կարգավորումներով և հնարավորինս սեղմ ժամկետում գործընթացն ավարտին հասցնել:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքային միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների վերաբերյալ *//զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն մեկնարկել և շարունակվում է համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքները: 2021թ.-ին մարզի համայնքներում առկա էր 138 միավոր շենք-շինություններ, որոնք դեռևս պետական գրանցում չունեին: Մարզպետի աշխատակազմի և համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում մինչ օրս 123 միավոր շենք-շինություններ արդեն իսկ գրանցվել և ձեռք են բերել սեփականության իրավունքի վկայականներ: 28.07.2023թ. դրությամբ մարզի համայնքներում մնացել է ընդամենը 15 միավոր գույք, որոնք դեռևս գրանցված չեն: Հետևողական աշխատանքները շարունակվում են:

Մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց հետևողական լինել, հարցը թողնել օրակարգում, որպեսզի հաջորդ նիստին կատարված աշխատանքների արդյունքը համեմատելի լինի:

4. Բնակչության ազդարարումն ապահովելու նպատակով մարզում ազդարարման համակարգի ներդրման վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունից և մարզի համայնքների ղեկավարների կողմից ստացված տվյալների ամփոփման արդյունքում տեղեկացվել է, որ 23.01.2023թ. դրությամբ մարզի համայնքներում առկա է ազդարարման 108 էլեկտրական շչակներ: Մարզի ամբողջ բնակչության ազդարարման ձայնածածկույթի ապահովման համար անհրաժեշտ են ևս 42 շչակներ:

Հաշվի առնելով գործընթացի կարևորությունը՝ առաջարկվել է Թալին, Ապարան, Մեծաձոր, Ծաղկահովիտ և Ալագյազ համայնքներին 2023թ. տեղական բյուջեով նախատեսել անհրաժեշտ միջոցներ էլեկտրական շչակների ձեռք բերման և տեղադրման համար:

Մարզպետ Ս. Մովսիսյանի կողմից առաջարկվեց համագործակցել ՀՀ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության հետ սեղմ ժամկետներում աշխատանքներն ավարտին հասցնելու համար, քանի որ առաջիկայում նախատեսվում է ԱԻՆ-ի կողմից այդ համակարգի կենտրոնացված, միասնական կառավարման համակարգի ներդրման աշխատանքների գործարկումը:

5. Մարզում 2024 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերի հայտերի և տեխնիկական բնութագրերի ներկայացման կարգի մասին */ զեկուցող՝զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Գ. Պողոսյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Գ. Պողոսյանը ներկայացրեց, որ 2024 թվականի համար համայնքների սոցիալ տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր են ներկայացրել ՀՀ Արագածոտնի մարզի 8 համայնքներից 6-ը՝ Աշտարակ, Ապարան, Ալագյազ, Արևուտ, Թալին և Ծաղկահովիտ համայնքները: 2 համայնք՝ Շամիրամ և Մեծաձոր, ծրագրեր

չեն ներկայացրել: Շամիրամի դեպքում պատճառաբանվել է, որ համայնքի բյուջեում առկա գումարները օգտագործվելու է գազաֆիկացման նպատակով, իսկ Մեծածորի դեպքում՝ բյուջեում առկա ֆինանսական միջոցները բավարար չեն: Ընդհանուր առմամբ ներկայացվել է 33 սուբվենցիոն ծրագրեր, որոնք համապատասխան ոլորտային գերատեսչություններում քննարկվել և դրական եզրակացություն են ստացել: Ներկայացված ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 12 208 736 420 ՀՀ դրամ:Ներկայացվեց նաև ծրագրերն ըստ ոլորտների: ՏԿԵ նախարարության և ոլորտային գերատեսչությունների կողմից սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ դրական եզրակացությունը ստանալուց հետո համայնքներին առաջարկվել է կազմակերպել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների գնման մրցութային գործընթացը, ինչպես նաև կազմել սուբվենցիայի ամբողջական փաթեթը և սահմանված ժամկետում՝ մինչև ս/թ-ի նոյեմբերի 30-ը, ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ :

Մարզպետ Ս. Մովսիսյանի կողմից հանձնարարվեց սուբվենցիոն ծրագրերի հայտերի ներկայացման կարգի մեջ իրականացված յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել համայնքներին և ստեղծված աշխատանքային խմբի կողմից անհրաժեշտ խորհրդատվություն ապահովել:

6. ***Ընդերքօգտագործման նպատակով տրամադրված հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման մասին*** /զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:
/Զեկույցը կցվում է/:

Հ. Ստեփանյանի կողմից ներկայացվեց, որ ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներից հավաքագրվել է տեղեկատվություն օգտակար հանածոների արդյունահանում իրականացնող ընկերությունների վերաբերյալ: Համաձայն նախնական ներկայացված տեղեկատվության մարզում առկա է 57 արդյունահանում իրականացնող ընկերություն: Օգտակար հանածոների արդյունահանման համար 57 հողամասերից ամբողջությամբ հողամասի նպատակայն նշանակությունը փոխված է 22-ում, մասնակի է փոխված կամ ենթակա է ճշգրտման 12 հողամասի նպատակայն նշանակություն, 5 հողամասինը գտնվում է փոփոխման փուլում: Մնացած դեպքերում հողօգտագործումը ոչ նպատակային է, ուստի անհրաժեշտ է, որ թույլ չտրվի ապօրինի հողօգտագործումը համայնքի սահմաններում: Այդ իրավասությունը դրված է համայնքի ղեկավարի վրա, որի համաձայն համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները: Օգտակար հանածոների արդյունահանման համար հողամասերը տրամադրվում են ընդերքի օգտագործման իրավունք հաստատող փաստաթղթերին համապատասխան: Ընդերքօգտագործողներին նոր հողամասեր չեն կարող տրամադրվել, եթե նրանց գործունեության արդյունքում նախկինում խախտված հողերը վերականգնման նախագծերին համապատասխան չեն վերականգնվել:

Մարզպետի կողմից առաջարկվեց համայնքների ղեկավարներին հետևողական լինել հողերի ոչ նպատակային օգտագործման դեպքերի կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Նշեց, որ առանց հողի նպատակային նշանակության փոփոխության հողի ոչ նպատակային օգտագործելը, ըստ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, ունենալու է իրավական հետևանքներ ինչպես հողօգտագործողների, այնպես էլ

նման իրավախախտումը կանխարգելելու և կասեցնելու իրավասությամբ օժտված պաշտոնատար անձանց համար: Պետք է վերանայվի և օրինական դաշտ բերվի բոլոր փաստաթղթերը, պայմանագրերը: ***Մարզպետի կողմից հանձնարարվեց***, որ այս հարցը ևս պետք է ներառվի հաջորդ նիստի օրակարգում, որպեսզի գնահատվի իրականացված աշխատանքների արդյունքը:

7. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2021-2023թթ. սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ /զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/ :

/Զեկույցը կցվում է/:

Ներկայացվեց, որ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում իրականացվել են համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնց մեջ կան ծրագրեր, որոնք սկսվել են դեռևս 2021թ.-ին: Կարբի բնակավայրում իրականացվող համայնքի հասարակական նշանակության տարածքների բարեկարգում ծրագիրը, որը դադարեցվել էր ԿԳՄՍ նախարարության հուշարձանների պահպանություն ՊՈԱԿ-ի կողմից, նախագծային փոփոխություններից հետո շինարարական աշխատանքները շարունակվում են և գտնվում են ավարտական փուլում:

2022 թվականին Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված հաստատվել են 19 սուբվենցիոն ծրագրեր: Դրանցից ավարտվել են 13-ը, 6-ը ընթացքի մեջ են:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկման է ներկայացվել թվով 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել թվով **21** ծրագիր: **Ընդհանուր՝ 7 430 350 338 դրամ արժեքով:** 2 ծրագրի աշխատանքները ավարտվել են: Ներկայացվեց ծրագրերն ըստ ոլորտների և համայնքների:

Քննարկվեց նաև սուբվենցիայի ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվող ՀՀ Արագածոտնի մարզի մանկապարտեզներին անհրաժեշտ գույքով ապահովելու հարցը: Նշվեց, որ նախադպրոցական ուսումնական հաստատություններին անհրաժեշտ գույքի անվանացանկը ներկայացվել է ԿԳՄՍ նախարարություն, որի վերաբերյալ պայմանավորվածություն է ձեռք բերվել, և հարցը կլուծվի մինչև առաջիկա սեպտեմբեր ամսվա ավարտը:

Մարզպետի կողմից կարևորվեց նաև այն խնդիրը, որ համայնքներն իրենց սուբվենցիոն հայտերը կազմելիս պետք է առաջնորդվեն բացառապես իրենց բյուջեում եղած հնարավորություններից:

Զեկույցների ավարտից հետո մարզպետ Սերգեյ Մովսիսյանը խոսքը տրամադրեց կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ **Գ. Թադևոսյանին, որը հանդես եկավ հայտարարությամբ և տեղեկացրեց, որ օգոստոսի 5-ին Շիրակի մարզում կայանալու է**

Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման արարողությունը, որի մասնակցության համար նախօրոք պետք է հայտ ներկայացնել:

Այլ հայտարարություններ և հարցեր չեղան: Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին, նշեց, որ համատեղ արդյունավետ աշխատանքի արդյունքը նկատելի է գրեթե բոլոր բնագավառներում: Մարզում օր օրի ավելանում են ներդրումային ծրագրերն ու դրանց նկատմամբ հետաքրքրությունները, որը նպաստելու է մարզի համայնքների բարգավաճմանն ու զարգացմանը:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝

Սերգեյ Մովսիսյան